ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

N 07/10/3454-12

«11» 09 2012թ.

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի
իրավաբան՝ Գևորգ Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Ձեր հարցադրումների, տրամադրում ենք հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի պաշտոնական պատվիրակությունների ընդունելության ժամանակ տրվող հյուրասիրությունների համար ֆինանսավորում չի նախատեսվում: Ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ վարչապետի համապատասխան որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պատվիրակությունների ընդունելության համար նախատեսված միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ներկայացված համապատասխան ծախսերի նախահաշվի հիման վրա:

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի պաշտոնական պատվիրակությունների ընդունելության ժամանակ տրվող հյուրասիրություններն իրականացնում են միայն համապատասխան ծառայություն մատուցող կազմակերպությունները: Ընդ որում, այդ նպատակով ընտրվում է ամենացածր գին առաջարկող համապատասխան ծառայություն մատուցող կազմակերպությունը: Հարցման արդյունքում համապատասխան կազմակերպության հետ կնքվում է մեկանգամյա պայմանագիր:

Ս.թ հունվարի 1-ից մինչև այսօր ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարն ընդունել է երկու պաշտոնական պատվիրակություն:

ՀՀ, Երևան0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 2, հեռ.(37410)521 964, ֆաքս(37410)526 365

- 2012թ. մարտի 28-29-ը Երևանում էր << Էներգետիկ համայնքի>> քարտուղար Ս. Նեյկովի գլխավորած պատվիրակությունը: Այս միջոցառման հյուրասիրությունը կազմակերպել է <<Հին Էրիվան Հոլդինգ>> ՍՊԸ-ն: Հյուրասիրությունը (ուտեստներ և խմիչքներ) կազմել է 34.280 (երեսունչորս հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամ:
- 2012թ. ապրիլի 18-19-ը Երևանում էր Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալության գլխավոր տնօրեն Յու. Ամանոյի գլխավորած պատվիրակությունը: Այս միջոցառման հյուրասիրությունը կազմակերպել է <<Արարատ ռետորան>> ՍՊԸ: Հյուրասիրությունը (ուտեստներ և խմիչքներ) կազմել է 85.000 (ութսունհինգ հազար) ՀՀ դրամ::
- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության վարչական շենքի դահլիճում կազմակերպված ընդունելությունների ժամանակ՝ 2012թ ՀՀ բյուջեով նախատեսված 550.000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամից, հյուրասիրությունների համար (ջուր <<Բյուրեղ>>, թեյ, սուրճ և արևելյան քաղցրավենիքներ) ծախսվել է 231.100 (երկու հարյուր երեսունմեկ հազար հարյուր) ՀՀ դրամ:

Լ.Հարությունյան

528848

Կ.Ղահրամանյան